ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Երևան <<12>> հունվար 2021թ.

<< ԿԱ << ոստիկանությունը, ի դեմս << ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանի (այսուհետ՝ ոստիկանություն), որը գործում է << ոստիկանության կանոնադրության հիման վրա, մի կողմից և Հայաստանի <<Դինամո>> մարզական հասարակական կազմակերպությունը, ի դեմս նախագահի առաջին տեղակալ Ա.Մկրտչյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով << կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում),կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր), հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան.

1.1 Սույն պայմանագրով ոստիկանությունը պարտավորվում է **<<2021թ. պետության կողմից տրամադրվող դրամաշնորհ>>** ծրագրի (այսուհետ՝ **ծրագիր**) իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 24 464 200 (քսանչորս միլիոն չորս հարյուր վաթսունչորս հազար երկու հարյուր) << դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է **ծրագիրն** իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2 **Ծրագրով** նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1 Ոստիկանությունն իրավունք ունի.

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում **ծրագրի** իրականացումը, կամ **ծրագրի** իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է **ծրագրով** նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում **ծրագրով** սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ոստիկանության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. ոստիկանության կողմից գումարները չվճարվելու դեպքում, միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Ոստիկանությունը պարտավոր է՝

2.3.1. **ծրագրով** նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել **ծրագրի** (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել **ծրագրով** նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է **ծրագրի** և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ոստիկանությունը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել **ծրագրի** շրջանակներում ոստիկանության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել **ծրագրով** և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել ոստիկանության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. ոստիկանության ծառայողների ընտանիքների անդամների ֆիզիկական պատրաստականության պարապմունքների անցկացման և առողջության ամրապնդման համար անվճար հիմունքներով մարզադահլիճների, մարզահրապարակների և մարզագույքի տրամադրումը :

2.4.5. **ծրագրի** իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.6. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո կազմակերպությունը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը :

3. Հաշվետվությունների ներկայացման կարգն ու ժամկետները

3.1.Կազմակերպությունը պարտավոր է՝

3.1.1. սահմանված կարգով ոստիկանությանը պարբերաբար ներկայացնել **ծրագրի** իրականացման վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ: Հաշվետվությունը ներկայացվում է եռամսյակին հաջորդող ամսում 10 օրվա ընթացքում, իսկ տարեկան հաշվետվությունը ներկայացվում է մինչև հաշվետու տարվա հաջորդող տարվա հունվարի 15-ը ներառյալ:

3.1.2. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել **ծրագրի** իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ոստիկանության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

3.1.3. ոստիկանության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ ոստիկանության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

4. Մոնիթորինգը

4.1. Ոստիկանությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ոստիկանության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. Ոստիկանությունը ցանկացած ժամանակ կարող է **ծրագրի** շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով **ծրագրին** առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են **ծրագրով** նախատեսված միջոցառումների իրականացմանը համապատասխան կազմված սույն պայմանագրին կից ժամանակացույցով :

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և **ծրագրով** նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է ոստիկանությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Ոստիկանությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. **<<Հայաստանի <<Դինամո>> մարզական հասարակական կազմակերպությանը 2021թ. պետության կողմից տրամադրվող դրամաշնորհի օգտագործման>>** ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ոստիկանություն ք. Երևան, Նալբանդյան 130 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Գ/Հ 900011021947 ՀՎՀՀ 01533334	Հայաստանի <<Դինամո>> մարզական հասարակական կազմակերպություն ք. Երևան,Վարդանանց 69 Հեռ. /010/ 55-23-11 <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Հ/Հ 1150009613143139 ՀՎՀՀ 01503826
Վ. Մովսիսյան (ՀՀ ոստիկանության պետի տեղակալ) (ստորագրություն) Կ.S.	**Ա. Մկրտչյան** (նախագահի առաջին տեղակալ) (ստորագրություն) Կ.S

Հավելված N 1
20 21 թ. նոյեմբեր << 12 >> -ին
կնքված N 1 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)՝
1.	Հայաստանի <<Դինամո>> մարզական հասարակական Կազմակերպությանը 2021թ. պետության կողմից տրամադրվող դրամաշնորհ	ա/ ՀՀ ոստիկանության ծառայողների առողջության ամրապնդման,աշխատունակության և մարտունակության բարձրացման գործընթացի ապահովում : բ/ ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների անձնակազմի ֆիզիկական պատրաստականության, ծառայողակիրառական և զանգվածային մարզաձևերի տիրապետման հմտության բարձրացումն ու կատարելագործումը : գ/ ՀՀ ոստիկանության աշխատակիցների և նրանց ընտանիքների անդամների ֆիզիկական պատրաստականության պարապմունքների անցկացման և առողջության ամրապնդման համար անվճար հիմունքներով մարզադահլիճների, մարզահրապարակների և	Համաձայն ՀՀ Կառավարության 23.01.2003թ. N 174-Ն որոշման 21-րդ կետի պահանջի և ՀՀ ոստիկանության պետի 16.12.2020թ. թիվ 3540-Ա հրամանի՝ <<Դինամո>> ՄՀԿ մարզահամալիրում շաբաթական 4 օր (չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ օրերին) իրենց ֆիզիկական պատրաստականության պարապմունքներն են անցկացնում ոստիկանության տարբեր ստորաբաժանումներից ամսվա հաշվարկով շուրջ 2300 ծառայողներ,իսկ <<Դինամո>> ՄՀԿ Շիրակի մասնաճյուղի մարզադահլիճներում՝ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության մոտ 500 ծառայողներ՝ շաբաթական 1 օր : Համաձայն ՀՀ ոստիկանության պետի 16.12.2020թ. թիվ 3540-Ա հրամանով հաստատված	Կատարելագործելու ՀՀ ոստիկանության ծառայողի մասնագիտական վարպետությունն ու մարտական և ֆիզիկական պատրաստվածությունը ,ամենօրյա օպերատիվ-ծառայողական խնդիրների լուծման համար անհրաժեշտ մասնագիտական ունակությունները՝ արդյունքում ունենալով ֆիզիկապես առողջ և մարտունակ ոստիկան, ինչպես նաև, ոստիկանության ծառայողի առողջ և ֆիզիկապես կոփված ընտանիքի անդամներ:	25.12. 2021թ.	24.464.200

		մարզագույքի տրամադրումը : դ/ ՀՀ ոստիկանության ծառայողակիրառական և զանգվածային մարզաձևերի 2021թ. սպորտային միջոցառումների անցկացման օրացուցային պլանի համաձայն՝ <<Դինամո>> ՄՀԿ-ում անցկացվող միջոցառումների համար համապատասխան կահավորանքով մասնագիտացված մարզադահլիճների,խաղադահլիճի և կոմունալ պայմանների ապահովումը : ե/ ՀՀ ոստիկանության ծառայողների ֆիզիկական պատրաստականության պարապմունքների արդյունքներն ամփոփելու նպատակով ծառայողներից տարեվերջյան ստուգարքների ընդունման համար համապատասխան մարզադահլիճների, մարզահրապարակների, վազքուղիների և կոմունալ պայմանների ապահովումը :	սպորտային միջոցառումնե[illegible] անկացման 2021թ. օրացուցային պլանի)՝ Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ-ն ՀՀ ոստիկանության շուրջ 900 ծառայողների մասնակցությամբ սպորտային միջոցառումների անցկացման համար նախապատրաստում ու տրամադրում է համապատասխան կահավորված, մասնագիտացված մարզադահլիճներ և խաղադահլիճ՝ հոգալով միջոցառումների անցկացման ժամանակահատվածում կոմունալ, սպասարկման և էներգետիկ (էլեկտրաէներգիա, ջեռուցում, տաք ջրամատակարարում) ծախսերը : ՀՀ Կառավարության 23.01.2003թ. N 174-Ն որոշման 24-րդ կետի պահանջի և ՀՀ ոստիկանության պետի 16.12.2020թ. թիվ 3540-Ա հրամանի համաձայն՝ ՀՀ ոստիկանության ծառայողների ֆիզիկական պատրաստականության պարապմունքների արդյունքներն ամփոփելու նպատակով Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ-ն ՀՀ ոստիկանության շուրջ 2500 ծառայողներից տարեվերջյան դիֆերենցված ստուգարքների ընդունման համար ապահովում է համապատասխան մասնագիտացված մարզադահլիճներով, մարզահրապարակներով,			

			վազքուղիով և կոմուն պայմաններով՝ համաձայն ֆիզիկական պատրաստականության ստուգարքների հանձնման ժամանակացույցի : Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ-ում տարբեր մարզաձևերից մշտապես անցկացվում են միջոցառումներ,առաջնություններ և հուշամրցաշարեր՝ նվիրված ՀՀ ոստիկանության օրվան,ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված ոստիկաններին :			
Ընդամենը						**24.464.200**

ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Գ/Հ 900011021947
ՀՎՀՀ 01533334

Վ. Մովսիսյան
(ՀՀ ոստիկանության պետի տեղակալ)
(ստորագրություն)

Կ.S.

Հայաստանի <<Դինամո>>
մարզական հասարակական
կազմակերպություն
ք. Երևան,Վարդանանց 69շ.
Հեռ. /010/ 55-23-11
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150009613143139
ՀՎՀՀ 01503826

Ա. Մկրտչյան
(նախագահի առաջին տեղակալ)
(ստորագրություն)

Կ.S

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

Օրինակելի ձև

Հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարի 2011 թվականի փետրվարի 23-ի N 94-Ն հրամանով

<<ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ>>

Նախահաշիվը

եկամուտների գծով՝ (24464200) Քսանչորս միլիոն չորս հարյուր վաթսունչորս հազար երկու հարյուր դրամ:
(ընդամենը գումարը թվերով և տառերով)
դեֆիցիտի (պակասուրդի) գծով՝_____
(ընդամենը գումարը թվերով և տառերով)
գումարով:

ծախսերի գծով՝ (24464200) Քսանչորս միլիոն չորս հարյուր վաթսունչորս հազար երկու հարյուր դրամ:
(ընդամենը գումարը թվերով և տառերով)
կամ հավելուրդի գծով՝_____
(ընդամենը գումարը թվերով և տառերով)
_____ դրամ գումարով:

ՀՀ ոստիկանության պետ՝ գնդապետ Կ.Տ **Վ. Ղազարյան**

(ՀՀ պետական կառավարման մարմնի ղեկավարի /համայնքի ղեկավարի/ ստորագրությունը և Ա.Հ.Ա.)

12. 01 "2021թ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ

բյուջետային հիմնարկի բյուջետային միջոցների գոյացման և տնօրինման 01.01.2021թ.____ 31.12.2021թ. ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը **Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ**
2. Փոստային հասցեն ք. **Երևան Վարդանանց 69**
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման
4. ՀՀ պետական կառավարման (տեղական ինքնակառավարման) մարմնի անվանումը
5. Հիմնարկը սպասարկող բանկի անվանումը **ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ**
6. Հիմնարկի՝ բանկային հաշվի համարը **1150009613143139**
7. Արտաբյուջետային հաշվի բացման իրավական հիմքը՝ ՀՀ կառավարության **„30„ դեկտեմբերի 2020 թ. N2215-Ն** որոշումը

8. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ծածկագիր

Բաժին	Խումբ	Դաս
03	01	01

9. Ծրագրի անվանումը **Հասարակական կարգի ապահովում**
10. Ծրագրի կոդը 10
11. ՀՀ պետական կառավարման (ՏԻ) մարմնի կոդն ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման
12. Չափի միավորը՝ հազար դրամ

Տողերի NN	Արտաբյուջետային միջոցների գոյացման աղբյուրների և դրանց հաշվին իրականացվող ելքերի (ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի)		Նույն ժամանակահատվածի համար նախկինում հաստատված՝ մինչ նույն նախահաշվի հաստատումը գործող		Նույն նախահաշվով հաստատվող ցուցանիշները	այդ թվում՝ ըստ եռամյակների (եռամյակի ամիսների) աճողական		
	անվանումները	Տնտեսագիտական դասակարգման [illegible]	նախահաշվի ցուցանիշները	նախահաշվում կատարված փոփոխությունները (ավելացումը՝ /+/, պակասեցումը՝/-/)		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6
2000000	**I. ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 2111000+ տող 2112000+տող 2113000)**	x	**0,0**	**0,0**	**24464,2**	**6116,2**	**12232,1**	**18348,2**
	այդ թվում՝							
2111000	**Ե1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ**	x						
2112000	**Ե2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ**	x	0,0	0,0	**24464,2**	**6116,2**	**12232,1**	**18348,2**
	որից՝							
2112310	2.3.1 ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	**733100**	0,0		24464,2	6116,2	12232,1	18348,2
1000000	**II. ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող1100000+ տող 4000000)**	X	**0,0**	**0,0**	**24464,2**	**6116,2**	**12232,1**	**18348,2**
	այդ թվում՝							
1100000	**Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ (տող 1110000+ տող 1120000+տող 1130000+տող 1140000+տող 1150000+տող 1160000+տող 1170000)**	x	**0,0**	**0,0**	**24464,2**	**6116,2**	**12232,1**	**18348,2**
	այդ թվում՝							
1110000	**1. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող 1111000+ տող 1112000+տող 1113000+տող 1114000+տող 1115000+տող 1116000+տող 1117000)**	x	**0,0**	**0,0**	**20196,0**	**4370,2**	**9979,0**	**15768,3**
1111000	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	**4111**	0,0		20196,0	4370,2	9979,0	15768,3
1120000	**2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 1121000+ տող 1122000 + տող 1123000+ տող 1124000+ տող 1125000+ տող 1126000)**	x	**0,0**	**0,0**	**4268,2**	**1746,0**	**2253,1**	**2579,9**
	այդ թվում՝							
1121000	**2.1. Շարունակական ծախսեր**	x	**0,0**	**0,0**	4268,2	**1746,0**	**2253,1**	**2579,9**
	այդ թվում՝							
1121200	*ե-* Էներգետիկ ծառայություններ, այդ թվում՝	**4212**	**0,0**		**4268,2**	**1746,0**	**2253,1**	**2579,9**
	Էլեկտրաէներգիայի ծախս				1459,9	246,0	463,1	639,9
	գազի սպառում				2808,3	1500,0	1790,0	1940,0
3000000	**III. ԴԵՖԻՑԻՏ ԿԱՄ ՀԱՎԵԼՈՒՐԴ (տող 1000000 - 2000000)**	x	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**

„12„ հունվարի 2021 թ.

ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ______ **Ա. Մկրտչյան**

Կ. Տ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ (ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ) ______ **Ա. Հարությունյան**

«DINAMO» 01503826

ՀԱՎԵԼՎԱԾ N2
2021թ. հունվարի <<12>>-ին կնքված
N 1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հազ. դրամ

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել << 2021թ. պետական բյուջեի միջոցների կամ արտաբյուջետային միջոցների հաշվին, ընդ որում՝												Ընդամենը
		I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			
		Հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	2038,6	4077,4	6116,1	8424,8	10193,2	12232,1	14270,7	16309,3	18348,2	20386,8	22425,4	24464,2	24464,2

ՀՀ ոստիկանություն
ք.Երևան,Նալբանդյան 130
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011021947
ՀՎՀՀ 01533334

Վ.Մովսիսյան
/ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/

Կ.Տ.

ՀՀ ոստիկանություն
Հայաստանի <<Դինամո>>մարզական հասար. կազմ.
ք.Երևան,Վարդանանց 69 հեռ. /10/55-23-11
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ԲԲԸ
Հ/Հ 1150009613143139
ՀՎՀՀ 01503826

Ա.ՄԿՐՏՉՅԱՆ
/Նախագահի առաջին տեղակալ/

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N1
Դրամաշնորհի թիվ 1 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.Հիմնարկի անվանումը ՀՀ Ոստիկանություն

2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

Բաժին	Խումբ	դաս	ծրագիր	Նախարարություն
03	01	01	10	105019

3. Հիմնարկին սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի անվանումը ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

4. Գանձապետական բյուջետային կամ արտաբյուջետային հաշվի (հաշիվների) համարը 900011159044 ՀՎՀՀ 01533334

Ծրագրի անվանումը՝ Հասարակական կարգի պահպանության ապահովում

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել << 2021թ. պետական բյուջեի միջոցների կամ արտաբյուջետային միջոցների հաշվին, ընդ որում՝				
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Ընդամենը
1	2	3	8	11	14	15
Այլ ընթացիկ գրամաշնորհներ	4639	6116,1	12232,1	18348,2	24464,2	24464,2
Ընդամենը		6116,1	12232,1	18348,2	24464,2	24464,2

ՀՀ ոստիկանություն
ք.Երևան,Նալբանդյան 130
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011021947
ՀՎՀՀ 01533334

Ա.ՄՈՎՍԻՍՅԱՆ
/ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/

Կ.Տ.

ՀՀ ոստիկանություն
Հայաստանի <<Դինամո>>մարզական հասար. կազմ.
ք.Երևան,Վարդանանց 69 հեռ. /10/55-23-11
,,ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ,, ԲԲԸ
Հ/Հ 1150009613143139
ՀՎՀՀ 01503826

Ա.ՄԿՐՏՉՅԱՆ
/նախագահի առաջին տեղակալ/

Կ.Տ.